

ԵՂԵՌՆԱՇՈՒՆՉ 89 ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՐԻԼ

Մարդկային ցեղի սկզբնաղբումից ի վեր՝ խրաքանչիւր ողբերգութիւն, դժբախտութիւն կամ աղետ արժանացել է կարեկցանքի, միախթարութեան եւ դատաւարման: Դա օրինաչափ է: Սակայն անցեալ դարի առաջին եւ իր ծաւալով անմահընթաց Հայոց ցեղասպանութիւնը ոչ միայն չի արժանացել դատաւարման, այլ ամէն ջանք գործ է դրում այն դուրս մղելու պատմական այդ օրինաչափութիւնից:

Եղեռնագործ ճիւղ կապմակերպիչները ճիշտ էին ընտրել իրենց գործի սկիւր. սպանելու համար մի ժողովուրդ՝ պետք է ոչնչացնել այդ ժողովրդի մտաւորականութեանը, կրթումը էլիտային, ու ժողովուրդը առանց հովուի կը վերածուի ոչխարների ցրումը հօտի, որն այլեւս ենթակայ է ամէն տեսակ յարձակման եւ յափշտակութիւնների:

1915... Ապրիլ 24...: Հայ ժողովուրդը անդամալուծուեց: Այնուհետեւ սկսուեց Հայ ժողովրդի տարագրութեան փշոտ ճանապարհը: Ժողովրդի համար ամենամեծ դժբախտութիւնը իր հայրենի հողից ու ջրից բաժանուելն է: Սեփական հողն ու ջուրն են ժողովրդի կատարեալ երջանկութեան գրաւականը:

Տարագրութեան ճանապարհին մեծ փորձութիւններ էին սպասում Հայ ժողովրդին. բռնի կրօնափոխութիւն, կանանց եւ դեռատի աղջիկների առեւանգում եւ բռնաբարում, բարոյական ամենատարբեր նուաստացումներ, սով, ծարա...: Վտարանդի Հայ ժողովրդի վերջին հանգրուանը պիտի լինէր Միւրեական Դիէր ալ-Չոր կիսիչ անապատը: Փրկուեցին ընդամենը մի քանի տասնեակ հազար մարդկային իյեւակներ:

Ժրագրում էր թողնել ընդամենը մէկ հայ, այն էլ՝ իբր թանգարանի ցուցանմուշ: Բայց արիւնարբու օսանցին իր հաշտարկը սխալ էր արել, քանի որ հայ ազգին ոչնչացնելու համար, նախ պետք է սպանել Հայ ազգի ոգին, բայց նրանք տեղեակ չէին ոգու առկայութեանը: Ու կենդանի մնացած այդ ոգին էր, որ վերակենդանացրեց Հայ ազգին եւ Եղեռնին յաջորդած մի քանի տասնամեակների ընթացքում Հայ ազգը իրեն վերագտնելուց յետոյ դարձաւ պահանջատէր: Մենք պահանջում ենք, որ աշխարհը դատաւարոյի Հայոց Եղեռնը, իսկ Թուրքիան՝ ճանաչի իր գործած ոճիրը: Պահանջատիրութեան այս ոգին ամէն տարի Ապրիլ 24-ին Հայ ժողովրդին միաւորում է նոյն պահանջի շուրջ:

Պահանջատիրութեան այս գործընթացին մասնակցում է նաեւ Երուսաղէմի փոքրաթիւ զաղութը: Ամէն տարի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում մատուցում է սուրբ եւ անմահ Պատարագ, իսկ յաւարտ սուրբ Պատարագի կատարում է Հոգեհանգստեան պաշտօն՝ վստն բխրաւոր Հայ նահատակաց: Այնուհետեւ կարմում է սգոյ թափօր եւ հիւր դիւանագէտների, եկեղեցականների ու ժողովրդի ուղեկցութեամբ այն ուղղում է դէպի Սուրբ Փրկչի Վանք՝ Արարայի յուշարձան, որտեղ եւս կատարում է Հոգեհանգստեան պաշտօն եւ տրում օրուայ պառգամբ: Իսկ երեկոյեան տեղի է ունենում Երուսաղէմի Ապրիլեան Միացեալ Յանձնախմբի նախաձեռնութեամբ կարմակերպումը սգոյ հանդէսը:

Այս տարուայ սգահանդէսին իրենց խօսքով հանդէս եկան՝ Յակոբ Սեւան (Հ. Մ. Ը. Մ.), Յարութ Գալայճեան (Հ. Ե. Մ.), Փօլին Ալէմեան (Ե. Հ. Բ. Մ.) եւ Գէորգ Հինդեան: Կատարուեցին սգոյ երգեր եւ արոտասանութիւններ, ցուցադրուեցին սահիկներ: Սգահանդէսի աւարտին փակման խօսքով հանդէս եկաւ Պատրիարք Սրբապան Հայրը եւ յորդորեց պահպանել զոհերի յիշատակը:

Իբրեւ վերջաբան մէջբերենք մեծանուն բանաստեղծ Պարոյր Սեւակի «Անլուելի Զանգակատուն» պոէմից մի հատուած, որը Եղեռնի անմար ցաւի յիշատակութիւնն է՝ մեր մէջ ապրող.

Ո՛ւց մոռանալ: Ե՛կ մոռացիր
Որ ապրիլեան այն ահաւոր
Ու ոճրապարտ լուսաբացին
Բարբարոսի խուժողիժ ձեռքեր
Սուրբ խորաններ կողոպտեցին՝
Խորանները հայ կանառի,
Հայ դպրութեան սուրբ տաճարի,
Բոլոր ոստերն անգթօրէն կտրատուեցին
Հայ հանճարի
Ծաղկուն ծառի...:

ԿՈՐԻԻՆ ԱԲՂ.

Ս. Թարգմանչաց Վարժարանի «ՄԵՐ ԹԱՂԸ»

2004 ռուսումնական տարուան ընթացքին, հովանաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, Սրբոց Թարգմանչաց Մանկապարտէզի եւ Երկրորդական Վարժարանի աշակերտութիւնը ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ ներկայացուց «Մեր Թաղը» թատրերգութիւնը, երկու արարով՝ րեմադրութեամբ Տէք. Անուշ Նագգաշեանի, երգի եւ նուագի քաժիններով՝ ընկերակցութեամբ տիար Կարօ Տէմիրճեանի, եւ րեմայարդարութեամբ Տ. Ընծանուէր Արդ. Բարսիսանեանի:

Ուրբաթ, 20 Փետրուարին, Ս. Թարգմանչաց Վարժարանի աշակերտները փայլուն կերպով հանդէս եկան «Մեր Թաղը» թիւ 1 թատրերգութեամբ, իսկ անով խրախուսուած իբրեւ շարունակութիւն Շաբաթ, 8 Մայիս՝ «Մեր Թաղը» թիւ 2 թատրերգութեամբ: Զոյգ արարներու մէջ ներկայացուած էին Վանքի եւ ընդհանրապէս Հայոց Թաղին մէջ գոյութիւն ունեցող ամէն կերպար, իր իրայատուկ ոճով եւ աշխարհով: Աշակերտները բարձր տրամադրութեան մէջ պահեցին ներկայ ծնողներն եւ Սաղիմահայութիւնը: Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ՝ Տ. Թէոդորոս Արդ. Զաֆարեան, իր բացման խօսքով ողջունեց կատարուած աշխատանքը:

Այնուհետեւ, Պատրիարք Սրբազան Հայրը իր օրհնութեան խօսքով գնահատեց տաղանդները րեմադրիչներուն եւ դերակատար աշակերտներուն, անդրադարձաւ որ մեզի շրջապատող աշխարհը եւ Վանքի մէջ կերպարներու իրողութիւնը րեմ հանելու ամէն մի քայլ գնահատանքի եւ խրախուսանքի է արժանի:

Ի. Մ.